

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՆՈՂԱՅ ԻՐԱՆՈՒՆՔԸ

ՈՐԴԻՈՑ ՎՐԱՅ:

Բնութեան իրաւունքը այնքան անձուկ ու նեղ կերպով կապակցեց այս երկու տարրերէսին որ իրար հետ, մինչև որ քաղաքական ու իմաստուն օրէնսդիրները նոցա մէջ չկարողացան օրինաց և ոչ մի իրաւունք դնելով՝ ենթարկելին քաղաքական իրաւանց տակ, որովհետև պարզ հասկացած էին, որ բնականապէս ոչ մէկը չի կարողանալ փնտսել ինքն իրեն, և ո՞վ որ փնտսէ զաւակին, նա թշնամի է իրա իսկ անձին: Այնքան իրաւացի է բնութեան այս արդար օրէնքը, որ ամեն մէկ անհատի, թէև շատ ապուշ, հարկաւ կը բռնադբօսէ հաւանելու սրան, որ բնութեան ընդարձակ դահլիճի մէջ սա բոլորիցը առաջին տեղը ունի բռնած. որ արուեստաւորը չը սիրեր բնաւորապէս իրա զործը, որ թէև շատ անկատար թուի ուրիշներին, բայց նոյն իսկ արհեստաւորի համար ամենից գեղեցիկ ու կատարեալն է: Բնութիւնը քանի՞ անագործուն հայր գտաւ այս ընդարձակ տիեզերադնտի մէջ, որ զաղանուծեամբ իր որդւոյ կեանքը բարձած լինի աշխարհից, և քանի՞ ապերախտ զաւակ, որ հայրական զթոյ դէմ կռուած՝ ամենայն ուժով աշխատած լինի կեանքը վերցնել նորա, որից ստացաւ իր կեանքը նա:

Եթէ հեթանոսութեան խաւար ու անխիղճ դարի մէջ գտաւ մի քանի որդեսպան հայրեր, այնպիսեաց վրայ բնութիւ-

նը կարգեց օրէնք Եդիպտացի Օրէնսդրաց ձեռքով, որ նոքա երեք օր պահապանաց հսկողութեամբ նստին իրենց զաւակի անթաղ մարմնոյ առջևը. ու քննելով իրանց աչքը նորա անշունչ դիակի վերայ՝ մտածեն իրենց արած գործը, և զգաստանան, բաւական համարելով նրանց խղճմտանաց խայթը, որ իբրև արդարադատ դատաւոր կը խայթէր հայրագործով սիրտը ու զուծը, աչքերը հաւատարիմ վկայ անելով նոցա անգթութեանը, ու երկու դահիճ սէրը ու կսկիծը, ատեան՝ մարդկանց բազմութիւնը, ու գանգատող՝ մեռած մարմինը:

Ամենայն մարդ՝ որ ենթարկուած է խղճի ու կարեկից հոգւոյ, պէտք է մտածէ ու ինքն ըստ ինքեան սարսափի, թէ քանի՞ ողորմելի վիճակի հասած կլինի այն որդեսպան հայրը, երբ իրեն սիրելի որդւոյ անշնչացած դիակը իր աչքի առաջը ժահահոտած կը տեսնէ: Արդեօք նորա այս դրութիւնը չէր մաշել հօրը աղէտուր կսկրծալուց, երբ որդունքը նորա որդու ժահահոտած մարմնոյ վերայ կը եռային, միայն մեռածի դիակը կուտէին. ոչ. յայտնի բան է, որ հօր կենդանի կեանքն էլ ի միասին կը ոչնչացնէին, նորա ցուրտ արիւնը՝ որ վէրքի բերանից դուրս կհոսէր, հօր համար մէկ տանջող բոց էր, որ բնութիւնը սովորացրեց մեռելներին՝ տանջել կենդանիքը իրանց հետ: Այնքան է որդեգրաւ հօր մեղացի փոխադարձը, որ բնութիւնը արդարապէս կարգադրեց մարդկային զաւակների մէջ:

Եթանոսական օրէնք այսպիսի ծանր պատիժ դրեց որդեսպան հօր վրայ, բայց և ոչ մի մարմնական հատուցում չկարո-

դացաւ հայրասպան որդւոյ վրայ զնել. սա-
կայն ստոյգ բացայայտելու համար, թէ ո՞վ
աւելի մեղանշական գտաւ բնութեանը, որ-
դեասպան հայրը, թէ հայրասպան որդին, ո-
րոշ կանոն չկայ. բայց կարելի է ասել, թէ
հայրասպանը աւելի ազերախտ է, և որդե-
սպանը՝ կարի անդուլթ. որովհետեւ առա-
ջինը վերջացրեց նորա կեանքը, որից ստա-
յաւ ինքը կեանք. և երկրորդը ոչնչացրեց
նորան, որին ինքը տուեց կեանք. երկուքն
էլ սարսափելի հրէշ են մարդկային ծննդոց
մէջ, որոնցից ինքը իսկ բնութիւնը կրսոս-
կայ. և կը դարհուրի: Քայց կարելի է թե-
թեւ համարել այն յանցանքը հօր կամ
որդւոյ, որ քաղաքական իրաւանց համար,
և կամ մեծամեծ և պատուաւոր առիթ-
ներու մասին եղած է կամաւոր ու ակա-
մայ կամքից խառնուած: Եզամեմնոն Յու-
նաց զօրավարը Տրոյացւոց դէմ բացուած
կռոյ յաղթանակը ինքը տանելու համար
իր Լուսիւղինէ դուստրը զոհեց իր ձեռք
կուռքերին, թէ և առաջին անգամը անհր-
նարին համարեց նա այդ բանի կատարուի-
լը հայրական խնամոց դէմ, սակայն միով
բանիւ չկարողացաւ բոլոր Յունաց կատա-
ղե յարձակմանց դէմ կենալ. որովհետեւ
մէկ ամբողջ ազգ դորանով պէտք է ազա-
տուէր փնասներից:

Այսպէս Խորայելացւոց դատաւորը Յեփ-
թայէ ուխտ գրեց Աստուծոյ հետ, որ եթէ
Ամոնացւոց յաղթէ, և ով որ իր տանից
յառաջ իրեն դիմաւորէ պատերազմի յադ-
թութիւնը ողջունելու, այն իսկ անձը
զոհ հանէ Աստուծոյ. երբոր յաջողե-
ցաւ գործը, ահա նորա միամօր դուստրը,
նորա միակ յոյսը և շատ սիրելին կը դիմա-
ւորէ նորան. «Այ ինձ, որդեակ իմ, կասէ

հայրը, և իր խոստման համաձայն նրան
զոհ կհանէ Աստուծոյ (Գառ. ԺԵ.
30-40):

Ահրնային տեսչութիւնը ծնողներին
բաշխեց սէր, և որդւոցը՝ հնազանդու-
թիւն, և այդ կերպովը կրախրին իւրաքան-
չիւր ծնողք իրենց որդիքը, ինչպէս պատ-
ճառը իրա գործը. և փոխադարձաբար որ-
դիքը կհնազանդին իրենց ծնողներին ինչ-
պէս իրենց պատճառին, բայց երբեմնապէս
կխոտորի այս բնութեան սահմանը իր կեդ-
րոնական առանցքից զանազան հակառակ
պատճառներով, և խանդարուած կերեւի,
մանաւանդ այնպիսի տեղերում, ուր մարդ-
կային կամքը ու կիրքը արտաքին առար-
կաների թելադրութիւններից բռնազօս-
ուած՝ կը հակամիտեն մարդկային ազա-
տութիւնը դէպ ի ներհակ գործողութիւն-
ներ, որոնք շատ հակառակ են բնութեան
արդար օրէնքներին:

Ինչպէս վերելք տեսնուեցաւ, կսիրէ
բնականապէս պատճառը իրա գործը, ար-
հեստաւորը իրա արհեստը, այնպէս էլ ան-
կարծիք հայրէ կը սիրը իրա որդին, չորս
զլնաւոր առիթների կան, որոնք կհարկա-
դրեն ծնողքը սիրել իրենց զաւակը. ա.
բնական սէրը՝ որ կստիպէ իւրաքանչիւրին
սէր ունենալ առ զաւակս, Բ. որդւոց ա-
պագայ թշուառութիւնը, Գ. իրենց որ-
դւոց երջանկութեան յոյսը, և Դ. անբան
անասնոց իրենց զաւակի վերայ ունեցած
սիրոյ և զրգուման օրինակը:

Նոողական սէրը եթէ սպառնալեաց
հետ շաղախուած չլինի, զաւակի համար
ապագայ թշուառութիւններ կպատրաս-
տեն, որովհետեւ մանուկ հասակը կսիրէ
միշտ խաղալ, ժամանակ կորցնել, և իրա

կամքի հետ գնալ. ուստի ծնողները պարտական են իրենց որդւոց մատաղ հասակումը չափաւոր և զգուշաւոր ահ սպառնալիք դործ գնել, որպէս զի անհետ առնելով հետզհետէ երախայական խակ զգացմունքները՝ աշխատին սպաւորել նոցա մէջ հրնազանդութեան սկզբունքը: Ապա թէ ոչ այն անմիտ մարդիքներին կ'նմանին, որոնք անզուսպ երիվար հեծած, սանձը թոյլ կուտան ձեռքից, որ իրեն հետ նստողներին ևս զահավէժ կառնէ սարերից ու քարափներից:

Նա կը թունաւորէ իր զաւակը, եթէ նորա դէմը անշահ բաների համար ծիծաղել ու նորա հետ միշտ գորովանօք վարուի, որովհետեւ այդ կիրառութիւնները որ երեխայութեան հասակումը կը համարուին զգուանք, չափահաս եղածին պէս՝ նրան կ'փոխուին զգուանք. քանի՜ քանի ծնողներ իրենց կենդանի որդւոց վերայ լացին, որոնց նման վաղամեռիկ զաւակաց տէրերը չ'սգացին, և այս մեծ պատճառով. որովհետեւ աստուածատուր ձիրքը, որքան թանկագին ու պատուական է մարմնաւոր կենաց մօտ, ա'յնքան նորա կորուստը ցաւալի, ծնողը՝ որ պատճառ եղաւ նորա կորստեանը, կրկին սգոյ է արժանի և մեծ թշուառութեան:

Աւելի ազգութիւն կուտայ երեխային այն ծնողը, որ նորա առջևը ուսեալ անձերի մօտաց բնական ձիրքերը ու արժանաւորութիւնները գովասանութեամբ յառաջ կրբերէ, կամ նորա հասակակիցների մօտաւոր սրութիւնները կ'ջատագովէ, որովհետեւ չ'կայ այնպիսի մեծ զրգիւռ մարդկանց մէջ, որ դէպ ի լաւութիւնը տանի, ինչպէս այս գովելի նախանձաւորութիւնը, որ բնական

է երեխայից աւելի շարժել առ այն. որով ի խոր կ'տպաւորուի նորա հոգւոյ մէջ ջանասիրութիւնը, մանաւանդ երբ նորա ընդունակութիւնը մի քիչ կրակոտ լինի:

Հարազատ ծնողական սէրը կ'պարտաւորցնէ, որ ծնողքը զաւակաց վրայ հսկին բարւոք կրթելու և բարւոք ուսուցանելու, բարւոք կրթելու համար հարկաւոր է ամեն կերպով հսկել նորա բարոյական կենաց վրայ, կեանքը բարոյակրթելու համար պէտք է առաքինի և սուրբ մարդկանց դործքերը յիշեցնել, և այս նախանձով հոգիքը վառել, որ բոլոր սրտով հետեին նոցա, և վարքով նմանին նրանց առաքինութեանը, և աշխատիլ մոլութեան վնասները և նոցա չար հետեանքը նշանակել, բացարձակ ցոյց տալով այն եղևոնագործ անձինքը, որոնցից յառաջ եկան շատ անձնական, հոգեկան, եկեղեցական և ազգային վնասներ և աւերմունք. նրանցից շատ գերազանց կը համարուի և առաջինն է ծնողական վարք ու բարքը, իսկ բարւոք (կրթութիւն) ուսուցանելու համար պէտք է նոցա սովորացնել տէրունական աղօթքը, ուրիշ կարեոր աղօթքներ, բարոյական առակներ, Վրիստոսական հաւատոյ վերաբերեալ գիտելիք, և հասակը զարգանալուց յետոյ ուրիշ հարկաւոր գիտութիւնները կենցաղավարութեան:

Ներխանները ամեն բանով ընդունակ են թէ առաքինութիւններին և թէ մոլութիւններին. նոցա քնքուշ միտքը իմաստունները նմանեցրին փափուկ մեղրամոմի, որի վրայ շատ հեշտութեամբ կը ներգործէ կնիքը իրեն նմանութիւնը, այսպէս էլ երեխայի սիրտը ամեն մէկ տպաւորութիւն շուտով կ'ընդունի, և նորա հասա-

կի հետ փոքր առ փոքր զօրանալով՝ կանէ նրան առաքինի կամ մոլի:

Աշխարհի վերայ այնքան պատիւ ունին մոլեքը, որքան աւագն խիճը՝ հազուադիւտ ակի մօտ. սորա համար մոլիններն են անթիւ՝ բայց առաքինիքը սակաւաթիւ. կորովամիտ Վիողինէսը արեւի լուսոյ առաջը լապտերը ձեռքը բռնած մարդկանց մեծ բազմութեան մէջ մարդ կը խնդրէր, և զարմանալու չէ. որովհետեւ ահա՛ իմաստուն վաճառականները ևս հայրենի աշխարհքից ծովէ ծով ընկած՝ հազուադիւտ ակեր կը գնեն և թանկագին մարդարիտներ: Աթէ մարդուն հազուադիւտ կանէ առաքինութիւնը, և դիւրագին՝ մոլութիւնը, ուրեմն պարտական են ծնողքը աշխատիլ զարդարել իրենց զաւակը առաքինութեամբ, քանի որ մանուկ են. ըստ որում առաքինութիւնն է գեղեցիկ զարդ մանուկների, ինչպէս ասացին իմաստունները:

Առ բնական է, որ մի և նոյն գերդաստանի մէջ հայրը աւելի կ'սիրէ որդւոյն, իսկ մայրը աղջկան. և սրան շատ կը յարմարի այս վաղեմի և իմաստուն խօսքը. «Վման զնմանն սիրէ», . սորա համար սիրոյ և բնութեան օրէնք կան, որ տղայքը դաստիարակուին հօրից, իսկ աղջկունք՝ մօրից, որով սնուցեալները իրենց դաստիարակներին նմանելով, տղայքը լինին քաջ և սրբտոտ, բարոյական և ուսեալ, իսկ դստերքը՝ պարկեշտ և պատկառոտ, նոյնպէս սուսեալ և բարեկերթ: Չէ հարկ ուրախանալ ծրնողաց՝ որ ունեցան զաւակ. այլ երբ որ նա ի զարգանալ հասակին եղաւ առաքինի, համեստ, շնորհունակ և հմուտ այլևայլ գիտութեանց կամ արհեստից: Ըստ իմաստնոյ առական «Արդի իմաստուն ու-

րախ առնէ զհայր. որդի անմիտ արամութիւն է մօր», :

Մանուկը Սարգիսի Ժամանակեանց

«Հայր և ընկէ՛ս դքս, ընդէ՛ր և զերկերդ խափանէ, , : Ա-էր:

Աշխարհիս տեսարանումը մարդս ի՞նչ կարող է նկատել, եթէ ո՛չ խառն ի խուռն մարդկանց բազմութիւն, որոնք անդադար կ'ջանան դէպ ի յառաջ դէպ ի յառաջ: Բայց անյայտ թեւակոխութիւն, որոնք որ շատերը իսկութեամբ չգիտեն թէ՛ ո՞ր պիտի յառաջն և ո՞ր է նրանց դէմ դըրած ասպարիզի ծայր,

Մէկը աշխարհի ծովեր և ցամաքները չափելով լցնումէ իւր գանձատուն աշխարհիս թանգագին նիւթերը, և իրաւապէս կարծումէ բազմացուցանելով իր ոսկւոյ արծաթոյ պատուական ականքի մթերները՝ կարող է կշտացնել իւր անյագ մաշող սիրտը: Մէկը՝ իր կարծուած գեղեցկութեան յապուշ կրթելով զմայլումէ իբրեւ չնաշխարհիկ համարելով մարդկային ընկերութեան մէջ՝ զանազան սնտի յոյսերով լցուած՝ կ'ջանայ իր ունայնամիտ սիրտը համոզել և օր քան զօր շքեղացուցանել իր եղծանելի պատկերը ի հիացումն . . . : Ոմանք իրանց անընկճելի քաջութեան ասպատան լինելով զհետ կպնդեն անկարելի և անհասանելի աշխարհը իրանց սեպհականել՝ փառաց և պերճութեան ջորին նստելով՝ որպէս զե աղաղակէ զինի նոցա անմիտ բազմութիւն, Ովսանն/ները՝ համբոյր հանդերձ ծնրադրութեամբ:

Եւ յո՛ կարշաւեն անարգել. բայց ո՛չ մէկը իր նպատակին հասու ելնել չէ ձեռն-